Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

Մեկենասութեամբ Արման Ուզունեանի՝
ի յիշատակ իր ծնողների՝
Նազար եւ Երջանիկ Ուզունեանների

Ouvrage publié avec le concours de
Mr. Armand Ouzounian
à la mémoire de ses parents
Nazar et **Yértchanik Ouzounian**

ԳԱՆՁԱՍԱՐ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Երեւան 1995

Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

ՔԱՐՈԶ ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ ՓՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

«Նախ փնտրեցէ՛ք Աստուծոյ արքայութիւնն ու Նրա արդարութիւնը, եւ այդ ամէնը աւելիով կտրուի ձեզ»[1]:

Սուրբ Հոգու օգնականութեամբ եւ ձեր աղօթքների օժանդակութեամբ կամենում եմ մեկնաբանել այս խօսքը՝ քարոզելով նախ՝ փնտրողների, երկրորդ՝ արքայութեան, երրորդ՝ խնդրուածքների մասին:

Ա
Փնտրողների մասին

Պէտք է գիտենալ, որ ոմանք չեն փնտրում Աստուծոյ արքայութիւնը, այլ փախչում են նրանից. ոմանք փնտրում են, բայց չեն գտնում. ոմանք փնտրում եւ գտնում են, սակայն չեն պահում. իսկ ոմանք էլ փնտրում, գտնում եւ պահում են: Այսպէս մարդիկ բաժանւում են չորս դասի:

Ովքեր չեն փնտրում Աստուծոյ արքայութիւնը, այլ փախչում են նրանից, իրենց կեանքի բոլոր օրերում չեն դադարում չարիք

---

* Տե՛ս Ս. Գրիգոր Տաթեւացի, Քարոզ յերկրորդ կիւրակէն վասն խնդրելոյ, «Գիրք քարոզութեան, որ կոչի Ճմեռան հատոր», Կ. Պոլիս, 1740, գլ. ՀԳ, էջ 333:

1 Տե՛ս Մատթ. Զ 33:

գործելուց: Սրանց մասին է ասում ս. Յովհաննէս Ոսկեբերանը, թէ չար մարդիկ կամենում են յաւիտեան ապրել, որպէսզի հանապազ չարը գործեն. եւ միշտ ցանկանում են կենդանի լինել, որպէսզի չդադարեն մեղանչելուց: Ուստի նրանք, ովքեր այս աշխարհում երբէք չեն դադարում մեղք գործելուց, մատնում են Աստուծոյ արդար Դատաստանին ու երբէք չեն զերծանում տանջանքներից: «**Զենք կամենում ճանաչել Քո ճանապարհները. ո՞վ է Ամենակալը, որ ծառայենք Նրան**»[2],- այսպիսի դառն ու դժնդակ պատասխան են տալիս նրանք, երբ որեւէ մէկը խրատում է իրենց:

Եւ այս ոչ միայն անհաւատներն ու չարագործներն են, այլեւ բազում չար հաւատացեալները՝ նրանք, ովքեր սոսկ հաւատացեալի անունն են կրում, իսկ բարի գործերից հեռացած են: Սրանք թէպէտեւ լեզուով հաւատում են, սակայն սրտով հեռացած են եւ գործով ուրանում են Աստծուն՝ ըստ այսմ. «**Ջուր են Ինձ պաշտում. լեզուով են հաւատում, իսկ սրտով հեռացած՝ մեկուսի են Ինձանից**»[3]: Այս է մարդկանց առաջին դասը:

Երկրորդ՝ ոմանք փնտրում են Աստուծոյ արքայութիւնը, բայց չեն գտնում: Սրանք սնափառներն ու մարդահաճներն են, որոնք պերճանում են փառասիրութեան հողմով. բարիք են գործում, սակայն փառամոլութեան պատճառով կորցնում են իրենց վարձը. մարմնով մեռնում են, սակայն հոգով չեն ապրում. չարչարւում են, սակայն չեն հանգստանում. տանջւում են, բայց պսակի չեն արժանանում, քանզի այդ **իսկ է նրանց վարձը**[4]:

2 Տե՛ս Յոբ ԻԱ 14-15:
3 Հմմտ. Ես. ԻԹ 13:
4 Տե՛ս Մատթ. Զ 2, 5, 16:

Սրանց մասին ասաց Տէրը. «**Միմեանցից էք փառք ստանում, իսկ Միակ Աստուծոյ փառքը չէք փնտրում**»[5]: Սրանց մասին է ասում Դաւիթ մարգարէն. «**Տէրը կցրի մարդահաճների ոսկորները**»[6]: Այս դասին է պատկանում փարիսեցին, որն ասում էր. «**Գոհանում եմ Քեզանից, Տէ՛ր, որովհետեւ այնպիսին չեմ, ինչպէս մարդկանցից ոմանք**»[7]: Ահա այսպիսի չարիք է փառասիրութիւնը. քանզի նա արդար մտաւ տաճար, բայց աղօթելիս մեղանչեց եւ մեղքով ելաւ այնտեղից: Իսկ մաքսաւորը, որ խոնարհութեամբ կուրծքն էր ծեծում եւ արտասւում, մեղքերով մտաւ տաճար, բայց արդարացած դուրս եկաւ այնտեղից: Սա է մարդկանց երկրորդ դասը, որոնք փառասիրութեամբ փնտրում են, սակայն չեն գտնում արքայութիւնը:

Երրորդ՝ ոմանք փնտրում են ու գտնում, սակայն չեն պահում: Այդ նրանք են, ովքեր միաժամանակ հաւատում են, բայց փորձութեան պահին ընկրկում են եւ այս անցաւոր կեանքի պատճառով զրկւում անանց կեանքից. մի փոքր ժամանակ վայելում են երկրի վրայ եւ յաւիտենապէս տանջւում դժոխքում: Եւ յիրաւի այսպէս է, քանզի ուրանում են Փրկչին ու Տիրոջը եւ կորչում առանց փրկուելու, ինչպէս նրանք, ովքեր լոյսը մերժելով՝ տանջւում են խաւարում: Սրանց մասին է ասում Տէրը. «**Ով ուրանայ Ինձ մարդկանց առջեւ, Ես էլ նրան կուրանամ Իմ Հօր եւ հրեշտակների առջեւ**»[8]: Սրանց օրինակն էին այն աշակերտները, որոնք երբ լսեցին Տիրոջից. «**Եթէ չուտէք մարդու Որդու Մարմինը եւ**

5 Տե՛ս Մատթ. Ե 44:
6 Սաղմ. ԾԲ 6
7 Տե՛ս Ղուկ. ԺԸ 11:
8 Տե՛ս Մատթ. Ժ 33, Ղուկ. ԺԲ 9:

չխմէք Նրա Արիւնը, ձեր անձերում կեանք չէք ունենայ», ասացին. «**Խիստ է խօսքդ: Ո՞վ կարող է այն լսել**», ու հեռացան[9]: Այսպիսիների մասին է ասում առաքեալը. «**Նրանց համար աւելի լաւ էր, եթէ ճշմարտութեան ճանապարհը ճանաչած չլինէին, քան ճանաչէին ու ետ դառնային**»[10]: Այսպէս ոմանք փնտրում եւ գտնում են, սակայն չեն պահում Աստուծոյ արքայութիւնը:

Իսկ չորրորդ դասը նրանք են, ովքեր փնտրում են Աստուծոյ արքայութիւնը, գտնում են եւ պահում: Նրանք այնպիսի սիրով են միաւորւում Աստուծոյ հետ, որ ոչինչ են համարում աշխարհի բոլոր վայելքները, եւ, ըստ առաքեալի, ոչինչ չի կարող նրանց բաժանել Քրիստոսի սիրուց՝ ո՛չ նեղութիւնները, ո՛չ հալածանքները, ո՛չ այլ ինչ[11]: Նրանք մշտապէս առաւելանում են բարի գործերում եւ յառաջ ձգտում. «**Անցեալը մոռացած՝ դէպի առաջ եմ ձգտում**»[12],- ասում է առաքեալը: Եւ Ճշմարտութիւնն ասում է Աւետարանում. «**Ով ձեռքը մաճի վրայ է դրել ու ետ է նայում, բարեյարմար չէ արքայութեան համար**»[13]: Նրանք նման են այն չորս կենդանիներին, որոնց տեսաւ Եզեկիէլը՝ լի աչքերով՝ առջեւից ու ետեւից, որ ընթանում ու ետ չէին դառնում[14]:

Պէտք է այսպէ՛ս փնտրենք Աստուծոյ արքայութիւնը՝ հաւատով, յոյսով եւ կատարեալ սիրով, եւ ապա կարող ենք գտնել այն: Եւ պէտք է իմանալ, որ ոմանք այն փնտրում

9 Տե՛ս Յովհ. Զ 54, 61, 67:
10 Տե՛ս Բ Պետ. 21:
11 Տե՛ս Հռոմ. Ը 35:
12 Տե՛ս Փիլ. Գ 13:
13 Տե՛ս Ղուկ. Թ 62:
14 Տե՛ս Եզեկ. Ա 4-27:

են միամիտ սրտով, իսկ ոմանք՝ երկմտութեամբ: Միամիտ սրտով նրանք են փնտրում, ովքեր սրտի ամբողջ բաղձանքը բեւեռում են դէպի Նա. միշտ յօժար կամքով, ե՛ւ հոգով, ե՛ւ մարմնով երկնքի արքայութիւնն են կարօտում: Ինչպէս որ ջրի ծարաւ ունեցողներն են, այնպէս էլ նրանք՝ կենաց ջրի, ինչպէս Դաւիթն է ասում. «**Իմ անձը երկրի պէս ծարաւ է Քեզ, լսի՛ր ինձ, քանզի նուաղեց իմ հոգին**»[15]: Այսպէս փնտրելու մասին է ուսուցանում Սողոմոն Իմաստունը՝ ասելով. «**Խորհեցէ՛ք Տիրոջ մասին բարութեամբ. եւ միամիտ սրտո՛վ փնտրեցէք Նրան**»[16]: Իսկ երկմտութեամբ փնտրողները նրանք են, ովքեր կամենում են այս կեանքում հարստանալ, հեշտանալ ու պատուել եւ հանդերձեալում նոյնպէս պսակուել: Սակայն այդպէս չի լինում երբէք: Տէրն ասում է. «**Չէք կարող ծառայել երկու տիրոջ՝ Աստծուն եւ մամոնային**»[17]: Եւ մարգարէն ասում է. «**Վա՛յ նրանց, ովքեր ընթանում են երկու ճանապարհով**»[18]: Երկու ճանապարհներն են՝ մէկը՝ նեղն ու անձուկը, որ տանում է դէպի կեանք, իսկ միւսը՝ լայնը եւ ընդարձակը, որ կորստեան է տանում[19]: Որովհետեւ չենք կարող հեշտութեամբ հանգիստ գտնել, ինչպէս ասում է առաքեալը. «**Պէտք է բազում նեղութիւններով մտնել հանգիստ, քանզի նա, ով կցորդւում է չարչարանքներին, նաեւ Քրիստոսի փառքին է հաղորդ դառնում**»[20]: Ուստի պէտք է միա-

15 Տե՛ս Սաղմ. ՃԽԲ 6, 7:
16 Իմաստ. Ա 1
17 Տե՛ս Մատթ. Զ 24, Ղուկ. ԺԶ 13:
18 Հմմտ. Առակ. ԻԸ 18:
19 Տե՛ս Մատթ. Է 13, 14:
20 Հմմտ. Գործ. ԺԴ 21, Հռոմ. Ը 17, Երր. Դ 3:

մի՛տ սրտով փնտրել այն, որովհետեւ սա է այն պատուական մարգարիտը, որի համար տալիս ենք մեր ողջ ունեցուածքը[21]՝ ո՛չ միայն մարմնական ինչքերն ու ստացուածքները, այլեւ մարմինը, նրա հեշտութիւններն ու բոլոր ցանկութիւնները, որից յետոյ գտնում ենք Աստուծոյ արքայութիւնը:

Արդ, փնտրենք այն, եղբայրնե՛ր, ոչ այնպէս, ինչպէս Ղովտի կինը, որ ետ նայեց եւ աղէ արձան դարձաւ, քանզի թէեւ դուրս ելաւ Սոդոմից, սակայն ետ շրջուելով՝ կործանուեց[22]: Նոյնպէս եւ մենք, եթէ արքայութիւնը փնտրելով՝ թողնում ու ետ ենք դառնում դէպի աշխարհի սէրը, կործանւում ենք: Այլ փընտրենք այն Հարաւի դշխոյի նման, որ երկրի ծայրերից եկաւ՝ լսելու Սողոմոն արքայի իմաստութիւնը[23]: Սողոմոն թարգմանւում է իմաստութիւն՝ խորհրդանշելով մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որ խաղաղութիւն արարեց երկնքում ու երկրի վրայ. Հայր Աստծուն հաշտեցրեց արարածների հետ եւ հրեշտակներին ու մարդկանց եւ հրեաների ու հեթանոսների Եկեղեցիները միաւորեց մի խաղաղութեան մէջ: Իսկ Հարաւի դշխոն խորհրդանշում է Եկեղեցին՝ հաւատացեալներիս, որ ճշմարտապէս եկանք երկրի ծագերից, այսինքն՝ հեթանոսական կրօններից՝ լսելու Քրիստոսի վարդապետութիւնը:

Դարձեալ՝ փնտրենք այն մեղաւոր կնոջ նման, որը իւղով օծեց Քրիստոսի ոտքերը եւ որին Տէրն ասաց. «**Գնա՛ խաղաղութեամբ, թող ներուած լինեն քո մեղքերը**»[24]: Այլեւ փնտրենք այնպէս, ինչպէս որ Յիսուսին տեսնել էր ձգտում կարճահասակ Զակքէոսը, որ ամբոխի պատճառով ժանտաթզենու ծառը ելաւ, եւ Տէրը, նրա տունը մտնելով, ասաց. «**Այսօր փրկութիւն եղաւ այս տան համար**»[25]: Փնտրենք այն իմաստուն կոյսերի պէս, որոնք վառել էին իրենց լապտերները ողորմութեան իւղով, եւ ոչ թէ յիմար կոյսերի պէս՝ մարած լապտերներով, որոնց Տէրն ասաց. «**Ճշմարիտ եմ ասում, չե՛մ ճանաչում ձեզ**»[26]: Փնտրենք, եղբայրնե՛ր, ոչ թէ ունայն ու անցաւոր կեանքը, այլ Աստուծոյ արքայութիւնը, որ անանց է եւ մշտնջենական:

Բ
Արքայութեան մասին

Տէրն ասում է. «**Երկնքի արքայութիւնը նմանուեց ագարակում ծածկուած գանձի**»[27]: Եւ արքայութիւնը գանձ է անուանում, որովհետեւ այն ստացողների համար գանձ է, լիութիւն եւ անհատնելի հարստութիւն: Նաեւ գանձի պէս ծածկուած է շատերից, եւ ամէն մարդ չի կարող գտնել: Դարձեալ՝ ովքեր փնտրում են, գտնում են այն, ինչպէս որ գըտնում են գանձ որոնողները: Վերջապէս՝ գանձ է, որովհետեւ այն գնում են եւ առանց վճարելու չեն կարող ստանալ, քանզի Աստուած այս կեանքը ձրի տուեց, մինչդեռ արքայութիւնը տալիս է գնով եւ բազում աշխատութեամբ:

Եւ յայտնի է, որ երկնքի արքայութիւնը բազմիմաստ է:

Նախ՝ Աստուծոյ արքայութիւնն է մեր Տէր Յիսուս Քրիստոս՝ Որդին վերին Արքայի՝ ըստ այսմ. «**Ապաշխարեցէ՛ք, քանզի մերձե-**

21 Տե՛ս Մատթ. ԺԳ 46
22 Տե՛ս Ծն. ԺԹ 26:
23 Տե՛ս Գ Թագ. Ժ 1-5, Բ Մն. Թ 1-4:
24 Տե՛ս Ղուկ. Է 49, 50:
25 Տե՛ս Ղուկ. ԺԹ 2-9:
26 Տե՛ս Մատթ. ԻԵ 2-12:
27 Տե՛ս Մատթ. ԺԳ 44:

ցել է երկնքի Արքայութիւնը»[28], այսինքն՝ Աստուծոյ Որդին: Եւ այն ծածկուած է մարմնի ագարակում՝ շատերի համար մնալով անյայտ, քանզի անհաւատների եւ հեթանոսների համար ո՛չ ճանաչելի է, ո՛չ էլ գտնելի: Եւ Արքայութիւն է կոչւում, որովհետեւ Նրա հետ թագաւորելու ենք երկնքում, ինչպէս առաքեալն է ասում. **«Եթէ համբերենք, Նրա հետ կթագաւորենք»**[29]:

Երկրորդ՝ արքայութիւն է կոչւում նաեւ սուրբ Եկեղեցին՝ հաւատացեալ ժողովուրդը, ինչպէս ասւում է Աւետարանում. **«Երկնքի արքայութիւնը նման է ծով նետուած ուռկանի, որ ամէն տեսակ ձուկ է հաւաքել, որը երբ լցուեց, ցամաք հանեցին»**[30]: Արդ, սուրբ Եկեղեցին արքայութիւն է կոչւում, որովհետեւ հաւատացել է երկնքի Արքային. եւ նա, ով այս կեանքում ստանում է արքայութիւնը եւ գործում, այնտեղ՝ հանդերձեալում, արժանանում է մեծ փառքի եւ, բնակուելով երկնքի արքայութեան մէջ, Քրիստոսի հետ թագաւորում:

Երրորդ՝ արքայութիւն է կոչւում աստուածային Սուրբ Գիրքը, որի մասին առաքեալն ասում է. **«Մերժեցիք Աստուծոյ խօսքը եւ անարժան եղաք յաւիտենական կեանքին»**[31]: **«Այս պատճառով,**- ասում է Քրիստոս,- **արքայութիւնը** (այսինքն՝ Սուրբ Գիրքը) **կվերցուի ձեզանից եւ կտրուի այն ազգին, որը պտղաբեր կդարձնի այն»**[32]: Եւ այն ծածկուած է բառերով, առակներով ու նիւթեղէն գրերով. եւ Աստուծոյ արքայութիւն է կոչւում, որովհետեւ Սուրբ Գրքում գրուած պատուիրանները պահողների համար բացւում է երկնքի արքայութեան մուտքը:

Չորրորդ՝ արքայութիւն են կոչւում նաեւ Եկեղեցու խորհուրդները, ինչպէս մկրտութիւնը, ապաշխարութիւնը, քահանայութիւնը, պատարագը եւ այլն: Սրանք եւս ծածկուած են նիւթական իրերով, որպէսզի հաւատացեալները գտնեն, իսկ անհաւատները կորցնեն: Եւ արքայութիւն են կոչւում, որովհետեւ տանում են դէպի արքայութիւն եւ սրբագործելով՝ միաւորում երկնքի Արքայի հետ:

Հինգերորդ՝ արքայութիւն է կոչւում եւ մարդու հոգին, որ ծածկուած է մարմնի ագարակում՝ անտես լինելով զգայարանների եւ տեսանելի՝ մտքի համար, որի մասին է Տէրն ասում. **«Աստուծոյ արքայութիւնը ձեր ներսում է»**[33]: Եւ արքայութիւն է կոչւում, քանզի երկնքի արքայութեան պատկերն է, ինչպէս գրուած է. **«Աստուած ստեղծեց մարդուն ըստ Իր պատկերի»**[34]: Եւ այսպէս հոգին մեր մէջ Աստուծոյ պատկերն է եւ արքայութիւն՝ սուրբ գործերի միջոցով: Իսկ չար գործերի միջոցով այն դառնում է սատանայի պատկերը, մեղքերի տուն եւ դժոխք: Ահա այսքան չար են մեղքերը, որ արքայութիւնը վերածում են դժոխքի:

Վեցերորդ՝ արքայութիւն է կոչւում եւ յաւիտենական կեանքը, որ Վերին քաղաքն է՝ հրեշտակների եւ հրեշտակացած սուրբերի բնակավայրը: Սրա մասին է Տէրն ասում. **«Երանի՛ հոգով աղքատներին, քանզի նրանցն է երկնքի արքայութիւնը»**[35]. իսկ մէկ այլ տեղ ասում է. **«Իմ թագաւորութիւնն այս**

28 Մատթ. Գ 2
29 Տե՛ս Բ Տիմ. Բ 12:
30 Հմմտ. Մատթ. ԺԳ 47:
31 Տե՛ս Գործ. ԺԳ 46:
32 Մատթ. ԻԱ 43

33 Ղուկ. ԺԷ 21
34 Ծն. Ա 27
35 Մատթ. Ե 3

աշխարհից չէ»[36]: Եւ այն արքայութիւն է կոչւում, որովհետեւ բոլոր երանութիւնների ու փառքերի լրումն է եւ ծայրագոյն հարստութիւն: Այդ պատճառով Տէրն ասում է. «**Նախ Աստուծոյ արքայութի՛ւնը փնտրեցէք**»[37], որովհետեւ նախ պէտք է փնտրել եւ ապա՝ գտնել, իսկ ովքեր չեն փնտրում, չեն գտնում: Այսպիսով, պէտք է փնտրել, գտնել ու պահել:

Գ
Խնդրուածքների մասին

Ցայտնի է, որ մարդու բոլոր խնդրուածքները երկու տեսակ են լինում. մէկը՝ սեփական անձի, իսկ միւսը՝ այլոց համար: Արդ, սեփական անձի համար խնդրուածքները չորսն են: Առաջինը այն է, որը Տէրն ուսուցանեց՝ ասելով. «**Փնտրեցէ՛ք Աստուծոյ արքայութիւնը եւ Նրա արդարութիւնը**»[38]: Ամենից առաջ պէտք է խնդրել արքայութիւնը, այսինքն՝ Քրիստոսին տեսնելը, որը եւ արժանացնում է յաւիտենական կեանքին: Այս խնդրուածքի մէջ է նաեւ մեղքերի թողութեան հայցումը (որն արդարացնում է մեզ, ինչպէս ասում է՝ եւ **Նրա արդարութիւնը**) եւ ապա՝ յաւիտենական տանջանքներից ու գեհենի հրից փրկութեան հայցումը:

Այսպիսով, մեղքերի թողութիւն, փրկութիւն տանջանքներից, երկնքի արքայութիւն եւ Քրիստոսի տեսութիւն՝ այս չորսն է պարունակում Տիրոջ ուսուցանած խօսքը. «**Փնտրեցէ՛ք Աստուծոյ արքայութիւնը եւ Նրա արդարութիւնը**»: Եւ նոյնը ուսուցանեց ասել աղօթքում. «**Թող սուրբ լինի Քո անունը, թող գայ Քո արքայութիւնը, թող Քո կամքը լինի**»[39]:

Երկրորդ՝ սրանից յետոյ պէտք է Նրանից յաջողութիւն խնդրել հաւատի եւ գործերի մէջ, քանզի հաւատը, յոյսը եւ սէրը Աստուծոյ շնորհներն են[40]. ինչպէս եւ՝ խոհեմութիւն ու արիութիւն՝ բարի գործերում, եւ ողջախոհութիւն ու արդարութիւն՝ ամէն ինչում[41]: Այս ամէնը Աստուծոյ պարգեւներն են, որոնք ում կամենում՝ տալիս է, եւ ովքեր խնդրում են, ստանում են: Աստուածային առաքինութիւնների մասին է ասուած. «**Եթէ մէկը հաց խնդրի հօրից, մի՞թէ նա քար կտայ**»[42]. հացը խորհրդանշում է հաւատը, որ կեանքի պատճառ է, իսկ քարը՝ անհաւատութիւնը: «**Եւ եթէ ձուկ խնդրի, մի՞թէ օձ կտայ**»[43]. ձուկը յոյսն է, իսկ օձը՝ յուսահատութիւնը: «**Եւ եթէ ձու խնդրի, մի՞թէ կարիճ կտայ**»[44]. ձուն խորհրդանշում է սէրը, որ բոլորաձեւ է ու կատարեալ, իսկ կարիճը՝ ատելութիւնը, որ խայթիչ է հոգու համար եւ ցաւաբեր:

Նմանապէս մարդկային առաքինութիւնների մասին Տէրն ասում է. «**Առանց Ինձ ոչինչ անել չէք կարող**»[45], քանզի **Նա է, որ յաջողում է մեր մէջ կամենալն ու կատարելը**[46]:

---

36 Յովհ. ԺԸ 36
37 Տե՛ս Մատթ. Զ 33:
38 Նոյն տեղում

39 Տե՛ս Մատթ. Զ 10:
40 Հաւատը, յոյսը եւ սէրը կոչւում են աստուածային առաքինութիւններ:
41 Խոհեմութիւնը, արիութիւնը, ողջախոհութիւնը եւ արդարութիւնը կոչւում են մարդկային առաքինութիւններ:
42 Տե՛ս Մատթ. Է 9:
43 Տե՛ս Մատթ. Է 10, Ղուկ. ԺԱ 11:
44 Տե՛ս Ղուկ. ԺԱ 12:
45 Յովհ. ԺԵ 5
46 Տե՛ս Փիլ. Բ 13:

Երրորդ խնդրուածքը մարմնի անհրաժեշտ կարիքների համար է, ինչպիսիք են չափաւոր կերակուրը եւ հանդերձը՝ ըստ Տիրոջ ուսուցանութեան. «**Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզ օրըստօրէ**»[47]: Չափաւորն ենք խնդրում եւ ոչ թէ աւելորդը, ինչպէս առաքեալն է ասում. «**Կերակուր եւ հանդերձ ունենք եւ դրանցով պիտի բաւարարուենք**»[48]: Հանդերձն այն է, ինչ ծածկում է մարմինը եւ պահում ցրտից, իսկ զանազան կերպերով զարդարուելը եւ առաւել ուտելն ու ըմպելը չարից է եւ հեթանոսներինը, ոչ թէ մերը: Նրմանապէս էլ՝ երբ մարմնի առողջութիւն ենք խնդրում եւ ազատութիւն գերութիւնից կամ չար տէրերից: Եւ այս խնդրում ենք, որպէսզի առողջութեամբ բարի՛ն գործենք, Տիրոջը ծառայենք, պաս պահենք եւ աղօթենք: Իսկ երկար ապրելու համար մարմնի առողջութիւն եւ հեշտութիւն խնդրելը հեթանոսների՛ սովորութիւնն է, որոնք աւելորդն են խնդրում:

Մեր անձերի համար չորրորդ խնդրուածքը մեղքերի փորձութիւններից, սատանայի որոգայթից, չար մարդկանցից, գազաններից եւ սոյնպիսիներից փրկուելու մասին է, ինչպէս ուսուցանեց Տէրը. «**Մի՛ տար մեզ փորձութեան, այլ փրկի՛ր չարից**»[49]:

Բայց եթէ միայն մեր անձերի համար խնդրենք, անձնասէր եւ անողորմ կլինենք, ուստի անհրաժեշտ է նաեւ այլոց համար աղօթել: Իսկ վերջինիս օգտակար լինելը ցոյց է տալիս առաքեալի խօսքը. «**Արդարի աղօթքը յոյժ զօրաւոր է օգնելու համար**»[50]:

47 Տե՛ս Մատթ. Զ 11:
48 Ա Տիմ. Զ 8
49 Մատթ. Զ 13
50 Յակ. Ե 16

Արդ, այլոց համար խնդրուածքներն էլ չորսն են:

Առաջին հերթին պէտք է խնդրել թագաւորների եւ աստուածասէր իշխանների համար՝ ըստ առաքեալի խօսքի. «**Ամէն ինչից առաջ աղօթք անել, խնդրուածք եւ պաղատանք մատուցել բոլոր մարդկանց համար, մանաւանդ՝ թագաւորների եւ իշխանների, որպէսզի հանդարտութեամբ վարենք մեր կեանքը**»[51]. այսինքն՝ նրանք մեզ պահեն մեր թշնամիներից, որպէսզի խաղաղութեամբ կատարենք մեր աստուածպաշտութիւնը: Պէտք է նրանց համար Աստծուց խնդրել երկար կեանք, առողջութիւն, յաղթութիւն թշնամիների նկատմամբ եւ այլն: Այս խնդրուածքում պէտք է աղօթել նաեւ հոգեւոր առաջնորդների համար (թէ՛ մեր անմիջական առաջնորդների ու խնամիչների, թէ՛ ընդհանուր Եկեղեցու՝ քահանաների, եպիսկոպոսների, վարդապետների ու հայրապետների): Պէտք է հայցել նաեւ խաղաղութիւն եւ միաբանութիւն համայն աշխարհի եւ Եկեղեցու համար, օդի բարեխառնութիւն, անձրեւի ու բերքի առատութիւն, ինչպէս նաեւ պատուհասների եւ ամէն տեսակ խռովութիւնների վերացում մարդկանց միջից:

Երկրորդ՝ պէտք է խնդրել հաւատացեալ ննջեցեալների համար, քանզի եթէ աղքատներն ու չքաւորները կարօտ են ողորմութեան, առաւել եւս՝ նրանք, ովքեր զրկուել են բոլոր բարիքներից ու յայտնուել անճարութեան մէջ: Եւ եթէ հաշմանդամներին ենք ողորմութիւն անում, որքա՜ն առաւել պէտք է նրանց ողորմել, որոնց ողջ մարմինն է ապականուել ու

51 Տե՛ս Ա Տիմ. Բ 1-2:

տարալուծուել հողի մէջ: Եւ եթէ մարդկանց ձեռքը գերի ընկածներին ենք ողորմում, որքա՜ն առաւել պէտք է նրանց ողորմել, ովքեր մեղքերի պատճառով մատնուել են սատանային: Եւ քանի որ իրենք չեն կարող ապաշխարել մեղքերի համար, եւ մեռեալներն էլ չեն կարող օգնել մեռեալներին ու տալ խնդրածը (ինչպէս որ Աբրահամը հարուստին մի կաթիլ ջուր իսկ չտուեց[52]), ուստի միայն մարդասէր եւ գթած Աստուծոյ ողորմութիւնն են ակնկալում եւ կարօտում ողջերի աղօթքներին, ինչպէս երանելի Յոբն էր ասում նրանց անունից. **«Ողորմէ՛ք, ողորմէ՛ք ինձ, բարեկամնե՛ր, քանզի Տիրոջ ձեռքը դիպաւ ինձ»**[53]: Հետեւաբար մենք պէտք է ողորմենք եւ աղօթենք նրանց համար, ովքեր յոյսով եւ հաւատով ննջեցին ի Քրիստոս, եւ աշխարհի սխալանքներից ինչ-ինչ բաներ մնացին նրանց մօտ. նաեւ նրանց համար պէտք է մեղքերի թողութիւն խնդրել, ովքեր, յանկարծակի մեռնելով (պատերազմում, գազաններից, հեղեղից, հողմից, կայծակից, հիւանդութիւնից կամ այլ պատահարներից), չկարողացան խոստովանել իրենց մեղքերը եւ սուրբ պսակի արժանանալ: Եւ այսպէս, պէտք է յիշել սուրբերին ու արդարներին որպէս բարեխօսների, իսկ մեղաւորներին՝ նրանց համար ներում խնդրելով: Եւ առհասարակ պէտք է յիշել բոլորին՝ թէ՛ ծանօթներին, թէ՛ անծանօթներին, թէ՛ մեր խնամքին յանձնուած երախտաւորներին՝ թէ՛ սուրբ պատարագի ընթացքում, թէ՛ մեր ամէնօրեայ աղօթքներում:

Երրորդ՝ պէտք է խնդրել նրանց համար, ովքեր տակաւին կենդանի են երկրի վրայ՝ թէ՛

52 Տե՛ս Ղուկ. ԺԶ 19:
53 Յոբ ԺԹ 21

հարազատների, թէ՛ օտարների՝ ճամփորդների ու նաւորդների, զանազան վտանգների մէջ նեղուողների, հիւանդների, տրտմեալների, ղեկավարների, արուեստաւորների, բարեկամների ու երախտաւորների: Այս աղօթքում պէտք է նաեւ առողջութիւն եւ խաղաղութիւն, ուղիղ վարք, անբիծ հաւատ եւ սոյնպիսի բաներ հայցել ժողովրդի, աշակերտների, որդիների, զաւակների եւ այլոց համար:

Չորրորդ՝ պէտք է խնդրել թշնամիների համար՝ ըստ Տիրոջ հրամանի. **«Սիրել ատելիներին եւ աղօթել թշնամիների համար»**[54]: Եւ պէտք է գիտենալ, որ թշնամիները երեքն են. նախ՝ սատանան, որ ատելի է թէ՛ Աստուծոյ, թէ՛ մեզ համար. երկրորդ՝ անհաւատներն ու մեղաւորները. եւ երրորդ՝ մեր վնասարարներն ու թշնամիները: Արդ, սատանային, որ ատելի է Աստծուն, պէտք է մենք եւս ատենք ու անիծենք, ինչպէս մարգարէն է ասում. **«Քեզ ատելիներին, Տէ՛ր, ատեցի եւ Քո թշնամիներից գարշեցի»**[55]: Իսկ մեղաւորների ու անհաւատների համար պէտք է աղօթել, որ Աստուած նրանց հաւատ տայ, եւ ետ դառնան մեղքից ու չմեռնեն անհաւատութեամբ ու մեղքով: Այս մասին է ասում մարգարէն. **«Տրտմութիւն պատեց ինձ մեղաւորների համար, ովքեր թողեցին Քո օրէնքը»**[56]. քանզի պէտք է տրտմել մեղաւորների եւ անհաւատների համար, որ դէպի կորուստ են ընթանում: Եւ նրանց ո՛չ օրհնել է պէտք, ո՛չ էլ անիծել: Իսկ մեր թշնամիները երկուսն են: Եթէ միայն մեր անձնական թշնամին է՝ մարմնի կամ ունեցուածքի պակասութիւն է պատճառել,

54 Տե՛ս Մատթ. Ե 44, Ղուկ. Զ 27:
55 Տե՛ս Սաղմ. ՃԼԸ 21:
56 Սաղմ. ՃԺԸ 53

մի՛շտ պէտք է օրհնել եւ ոչ թէ անիծել, ինչպէս գրուած է. «**Օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին եւ մի՛ անիծէք, բարի՛ արէք ձեզ ատողներին**»[57]: Եւ պէտք է մերժենք մեր սրտերից քէնն ու ոխը՝ ըստ այսմ. «**Եթէ թողնէք մարդկանց իրենց յանցանքները, ձեր Հայրն էլ կթողնի ձեր յանցանքները**»[58]: Իսկ եթէ թշնամի են ու վնասարար ընդհանուր Եկեղեցու եւ հաւատի նկատմամբ, պէտք է աղօթել նրանց համար, որպէսզի ետ դառնան չարիքից: Սակայն եթէ անզեղջ մնան, ինչպէս չար ու մեղաւոր մարդիկ եւ հերձուածողները, պէտք է նախատել եւ ոչ թէ օրհնել, քանզի նրանք եւս Աստուծոյ հաւատի ու կրօնի թշնամիներն են:

Այսպէս պէտք է ընտրողաբար խնդրել եւ աղօթել: Եւ Ինքը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս, որ առատաձեռն է իւրաքանչիւրիս բարիքներ շնորհելու մէջ, որ փոքր խնդրանքի դիմաց մեծամեծ պարգեւներ է տալիս, որ գիտէ նախքան մեր խնդրելը եւ պարգեւում է նախքան աղերսելը, մեր բոլոր խնդրուածքները թող ի բարին կատարի: Քանզի տեսնում է անհոգներիս եւ մեր միտքն ու կամքը դէպի բարին շարժում: Եւ թող Իր արարչական խնամքով թողնի մեր յանցանքները եւ բոլորիս առատապէս լցնի հոգեւոր ու մարմնաւոր բարիքներով. եւ Նրան փա՛ռք եւ գոհութի՛ւն եւ երկրպագութի՛ւն Իր Հօր եւ Ամենասուրբ Հոգու հետ. ամէն:

---

57 Տե՛ս Մատթ. Ե 44, Հռոմ. ԺԲ 14:

58 Տե՛ս Մատթ. Զ 14: